Բայց այդպէս չէ եղել անապատը: Նա անջատել է կեանքից եւ խզել է իր բոլոր յարաբերութիւնները աշխարհի հետ եւ այդ իսկ նպատակով, իր գոյութիւնը պահպանելու համար, ընտրել է երկրի ամենաթաքթաքուր տեղերը: Նա առանձնացել է անտառների մթին խորքերում, ապառաժների անմատչելի անձաւներում, ձորերի խորին փապարներում եւ լճակների անբնակ կղզիներում:

Անապատը այլ խօսքով կոչւում է մենաստան, իսկ վանքը՝ իջեւան, այդ երկու անունների նշանակութեան մէջ մեծ զանազանութիւն կայ:

Անապատը կենդանի մահացութիւն է. նրա նպատակն է՝ սպանել արտաքին մարդը՝ մարմինը, որպէսզի կենդանանայ ներքին մարդը՝ հոգին:

Բայց ինչի՞ց առաջ եկաւ այդ կատարեալ անձնուրացութիւնը, այդ յօժարակամ ինքնամերժումը կեանքից ու աշխարհից:

Անապատը երկրի ողբալի դրութեան հետեւանքն է: Երբ կեանքը ապահով չէ, երբ կեանքը մշտական վտանգների ենթակայ է, նա այն աստիճան անտանելի է դառնում, որ մարդիկ յուսահատւում են եւ, հեռանալով աշխարհից, աշխատում են անապատների առանձնութեան մէջ եթէ ոչ մարմնաւոր, գոնէ հոգեւոր մխիթարութիւն որոնել: Հանապազօրեայ դժբախտութիւնները մարդուն ձգտում են գերբնական ցնորքների մէջ. նա, չկարողանալով ըմբռնել իրան շրջապատող դառն երեւոյթների բնական պատճառները եւ, մանաւանդ, չկարողանալով մաքառել նրանց դէմ եւ յաղթել նրանց, վերջապէս վհատւում է, ընկճում է, հեռանում է աշխարհից եւ իր փրկութիւնը ու սրտի խաղաղութիւնը որոնում է անապատական կեանքի լռութեան մէջ:

Այդ ներգործութիւնն են ունենում աշխարհի դժբախտ հանգամանքները ոչ միայն թոյլ բնաւորութիւնների վրայ, այլ մինչեւ անգամ ամենազօրեղ բնաւորութիւնները շատ անգամ ենթարկւում են նրանց վհատեցուցիչ ազդեցութեանը:

Սուրբ Գրիգոր Լուսաւորիչը, չկարողանալով իսպառ ի կատար ածել իր սկսած մեծ պատերազմը հեթանոսական խաւարի եւ տգիտութեան դէմ, եւ երկար մաքառելով նախարարների ու ժողովրդի բարքի եւ վարքի կոպտութեան դէմ եւ զանազան դառն հալածանքների ենթարկուելով, վերջապէս յուսահատւում է, թողնում է հայրապետութեան աթոռը, հեռանում է աշխարհից եւ, առանձնանալով Սեպուհ լեռան այրերի մէջ, անձնատուր է լինում ճգնաւորական կեանքի եւ այնտեղ էլ անյայտութեան մէջ վախճանւում է: Նրա հզօր գործակիցը, Տրդատ թագաւորը, նոյն հանգամանքների պատճառով,